

Ստեփանակերտի մէջ նշուեցաւ Արցախեան շարժման 30-ամեակը



Փետրուար 13-ին լրացաւ արցախեան ազգային-ազատագրական շարժումին 30-ամեակը: Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ տեղի ունեցաւ բազմազարանոց ձեռնարկ՝ նուիրուած արցախեան շարժումի 30-ամեակին, որուն ընթացքին ելոյթ ունեցաւ նաեւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանը: Ձեռնարկին ներկայ էին Արցախի Հանրապետութեան երկրորդ նախագահ Արկաղի Ղուկասեանը, Հայ առաքելական եկեղեցւոյ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսեանը, արցախեան շարժման վեթերաններ, պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Հայաստանի եւ սփիւռքի ներկայացուցիչներ, արտերկրէն հիւրեր: Ձեռնարկին մասնակիցները պատաստներով, դրօշներով, կոշերով, Ստեփանակերտի կեդրոնական փողոցներէն շարժեցան դէպի Վերածնունդի հրապարակ, ուր տեղի ունեցաւ դարբաղեան շարժումի 30-ամեակին նուիրուած տօնական ձեռնարկը:

Լաւալի Հայ Դատի յանձնախումբը հանդիպում ունեցաւ Նախարար Ֆրանսին Շարպօնոյի հետ

Երկուշաբթի 29 Յունուար 2018-ին, Հայ Դատի Լաւալի յանձնախումբի ներկայացուցիչներ հանդիպում մը ունեցան Նախարար Տիկ. Ֆրանսին Շարպօնոյի եւ Քեպէզի Ազգային ժողովի անդամներու հետ՝ քննարկելու փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր, ինչպէս նաեւ Լաւալի հայկական համայնքի հետ առնչուող տարբեր մարտահրաւերներ:

Նկարին վրայ (ձախէն աջ) Պրն. Սաօլ Փօլօ Laval-des-Rapides- ի նահանգային երեսփոխան, Պրն. Կի Ուէլէթ Chomedey- ի նահանգային երեսփոխան, ընկ.Վարուժան Գալուստեան, Տիկ. Ֆրանսին Շարպօնօ Mille-Îles-ի նահանգային երեսփոխան, Նախարար Տարեցներու եւ բռնարարքներու դէմ պայքարի, եւ Լաւալի շրջանի պատասխանատու Նախարար, ընկ.Վիգէն ԱՖարեան, ընկ.Յովիկ Թիւֆէնքեան, Պրն.Ժան Ռուէլ Vimont-ի նահանգային երեսփոխան, Քաղաքապետական գործերու եւ հողերու պահպանութեան նախարարի խորհրդարանական օգնական եւ Հասարակական անվտանգութեան նախարարի խորհրդարանական օգնական:



HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com

Kevorg Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



ARZ
fine foods

*Home to
Authentic
Mediterranean Gourmet*



Բացումը Կատարուեցաւ Աշխատանքային Իրաւունքներու Պաշտպանութեան Գրասենեակին

Երեւանի Շէնգուալթ վարչական շրջանին մէջ ուրբաթ, 9 փետրուարին բացումը կատարուեցաւ Աշխատանքային Իրաւունքներու պաշտպանութեան գրասենեակին: Գրասենեակը հիմնուած է ՀՅԴ «Հրայր Մարուխեան» հիմնադրամին նախաձեռնութեամբ:

Աշխատանքային հիմնական իրաւունքներու մասին իրազեկում, աշխատանքային վէճերու պարագային դատական հայցերու պատրաստութիւն, աշխատողներու համար փաստաբանական անվճար ծառայութիւն, աշխատանքային վէճերու դժով (չվճարուած աշխատավարձ, աշխատանքէ անօրինական ազատումներ եւ այլն), զբաղուածութեան պետական ծառայութեան տարածքային կեդրոններ ուղղորդելու միջոցով աշխատանքային եւ մասնագիտական կողմնորոշման ու այլ հարցերու համար քաղաքացիները կրնան դիմել նորաբաց կեդրոն եւ անվճար օգտուել անոր ծառայութիւններէն:

Գրասենեակի պաշտօնական բացման արարողութեան ընթացքին, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամ Արսէն Համբարձումեան նշեց, որ աշխատանքի շուկայի ներկայ լարուած պայմաններուն մէջ, աշխատողներու աշխատանքային իրաւունքներու պաշտպանութեան հարցը սուր է: Ըստ անոր, յաճախ կը դրսեւորուին գործատուներու կողմէ աշխատողներու իրաւունքներու ոտնահարման փաստեր:

«Շատ յաճախ մարդիկ, չիմանալով, թէ որու դիմեն իրենց խնդիրներով, տեղեակ չըլլալով իրենց իրաւունքներու մասին, չեն կրնար հետամուտ ըլլալ իրենց իրաւունքներու պաշտպանութեան: Այս գրասենեակի նպատակը այդ է՝ գրասենեակը ամէնօրեայ աշխատանքային դրութեամբ անվճար ծառայութիւններ կը մատուցէ քաղաքացիներուն, որպէսզի նախ եւ առաջ անոնք իրազեկուած ըլլան իրենց իրաւունքներուն մասին եւ կարենան հետամուտ ըլլալ իրենց ոտնահարուած իրաւունքներու վերականգնման», շեշտեց Համբարձումեան:

Նշեց, որ Շէնգուալթ վարչական շրջանին մէջ բաւական մեծ է հիմնարկութիւններու աշխատակողներու թիւը:

Հայաստանի աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարի տեղակալ Թադևոս Աւետիսեան, ընդգծելով նման նախաձեռնութեան կարեւորութիւնը, նշեց, որ գրասենեակին բացումը պայմանաւորուած է ներկայ զարգացումներով: Ըստ Աւետիսեանի, աշխատանքային իրաւունքներու պաշտպանութիւնը ո՛չ միայն պետական որեւէ մարմինի գործառնութիւն է, այլ պէտք է եղած ջանքերը ներդնեն նաեւ բոլոր շահագրգիռ կողմերը, քաղաքացիական հասարակութիւնը, առանձին անհատներ, որոնք ունին նման կարելիութիւններ:

Ըստ ՀՅԴ Բիւրոյի անդամ Կիրօ Մանոյեանի, եթէ գրասենեակը յաջողի, պիտի փորձեն նաեւ մասնաճիւղեր ունենալ մարզերուն մէջ: Գրասենեակը երկու կարեւոր հարց պիտի լուծէ՝ աշխատողի իրաւունքներու մասին իրազեկուածութեան բարձրացում եւ այդ իրաւունքներու պաշտպանութիւն:

«Իբրեւ «Հրայր Մարուխեան» հիմնադրամի գործադիր տնօրէն՝ կրնամ ըսել, նախ պէտք է մարդոց իրազեկման խնդիրը լուծենք, որովհետեւ երբեմն նաեւ զարմանալի է՝ ինչքան իրազեկուած չէ հասարակութիւնը իր իրաւունքներուն մասին, սակայն նոյնքան կարեւոր է այդ իրաւունքներու պաշտպանութեան հարցը», ըսաւ Մանոյեան:

Եւրոպայի Հայ Դատը Պիտի Ծարուցակէ Կազմակերպել Եւրոպացի Գործիչներու Այցը Արցախ

Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը 2018ին պիտի շարունակէ կազմակերպել եւրոպացի հասարակական եւ քաղաքական գործիչներու այցերը Արցախ:

Ըստ «Արմէնփրէս»-ի՝ այս մասին յայտնեց ՀՅԴ Եւրոպայի Հայ Դատի յանձնախումբի հաղորդակցութեան եւ հանրութեան հետ կապերու պատասխանատու Յարութ Շիրինեան: Ըստ իրեն՝ այսօր Արցախի աշխարհաքաղաքական իրավիճակը այնպիսին է, որ Սփիւռքի մէջ ապրող իւրաքանչիւր հայ կը դառնայ Արցախի մէկ ղեսպանը:

«Այն, ինչ մենք գիտենք Արցախի պետականութեան, ժողովուրդին եւ դժուարութիւններուն մասին, պէտք է փոխանցել օտարներուն: Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը, կապի մէջ ըլլալով եւրոպացի շարք մը պատգամաւորներու հետ՝ անոնց եւ այլ հասարակական խումբերու այցելութիւնները գէպի Արցախ կը համարէ իր առաքելութեան հիմնական նպատակներէն մէկը: Վերջերս, Հայ Դատի գրասենեակը կազմակերպեց Եւրախորհրդարանի պատգամաւոր եւ արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի անդամ Լարս Ատաթթուսոյի գլխաւորած պատուիրակութեան այցը գէպի Հայաստան եւ Արցախ, ուր ան շարք մը քաղաքական հանդիպումներ ունեցաւ», ըսաւ Շիրինեան:

Ան նաեւ յայտնեց, որ այս պատուիրակութիւններուն այցը կարեւոր կը համարուի, որովհետեւ այդ գործիչները տեղւոյն վրայ կը ծանօթանան իրավիճակին, եւ այդ կը նպաստէ խորհրդարանական դիւանագիտութեան զարգացման, որ ձեւով մը նաեւ կը հակադէմ Ատրպէյճանի խաւարային դիւանագիտութեան:

«Այսպիսի ձեռնարկներու գործնական արդիւնքները կարելի է միայն երկար ժամանակամիջոցի մը ստանալ, սակայն անմիջական արդիւնքները նոյնպէս չեն ուշանար: Օրինակ մը կրնամ տալ՝ Պելճիքացի պատգամաւորներու Արցախի հետ բարեկամական խումբի կազմութիւնը, անիկա տեղի ունեցաւ Հոկտեմբեր 2017ին, Հայ Դատի գրասենեակի կազմակերպած Եւրոպահայոց 4րդ համագումարի ժիրին մէջ, Արցախի նախագահի ներկայութեամբ: Նշեալ բարեկամական խումբին մաս կազմող պատգամաւորները նախապէս ընդգրկուած էին Հայ Դատի գրասենեակի նախաձեռնութեամբ գէպի Արցախ այցելութիւն իրականացուցած պատուիրակութիւններուն մէջ:

Շարունակելով ներկայացնել ընթացիկ տարուան ընկերները՝ Յարութ Շիրինեան յայտնեց, որ նախորդ տարուան նման, այս տարի եւս պիտի աշխատին քանի մը ուղղութեամբ՝ Հայոց Յեղասպանութեան հարցին հետ կապուած արդարութեան պայքար, Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանում եւ մեկուսացման նուազեցում:



Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՎԵՂԵՑԻ

ՄԵԾ ՊԱՀՈՑ
ՀՄԿՈՒՄԻ ԵՒ ԱՐԵՒԱԳԱԼԻ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ
ԼՍԱՐԱՆ

1

Չորեքշաբթի, 14 Փետրուարի
Երեկոյեան ժամը 7:00-ին
ՀՄԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ապա խորհրդածութիւն:

Նիւթ՝ Ընկերային արդարութիւնը ըստ Ս. Գիրքին
Կը մատուցէ Վերայ. Յովհաննէս Սվաճեան

2

Չորեքշաբթի, 21 Փետրուարի
Երեկոյեան ժամը 7:00-ին
ՀՄԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ապա խորհրդածութիւն:

Նիւթ՝ Ազատութիւնը ըստ Ս. Գիրքին
Կը մատուցէ Տիկ. Նանիա Փիլիպոսեան

3

Չորեքշաբթի, 28 Փետրուարի
Երեկոյեան ժամը 7:00-ին
ՀՄԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ապա խորհրդածութիւն:

Նիւթ՝ Մակարայեցիներուն օրինակը
Վարդանանց կեցուածքին մէջ
Կը մատուցէ Թորոս Սրկ. Պապիկեան

4

ՄԻՋԻՆՔ

Չորեքշաբթի, 7 Մարտի
Երեկոյեան ժամը 7:00-ին
ՀՄԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

5

Չորեքշաբթի, 14 Մարտի
Երեկոյեան ժամը 7:00-ին
ՀՄԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ապա խորհրդածութիւն:

Նիւթ՝ Հաւատքը տարագրութեան մէջ
(Հայեացք Ս. Գիրքին մէջ արձանագրուած
փորձառութեան վրայ)

Կը մատուցէ Գերյ. Գեորգ Ծ. Վրդ. Զապարեան

6

Չորեքշաբթի, 21 Մարտի
Երեկոյեան ժամը 7:00-ին
ՀՄԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ապա խորհրդածութիւն:

Նիւթ՝ Շնորհքներն ու պարգևները
վասն ազգակերտումի
Կը մատուցէ Կարօ Սրկ. Նոխուտեան

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ուրբաթ օրերը առաւօտեան ժամը 9:00-ին
(16, 23 Փետրուար, 2, 9, 16, 23 Մարտ),
Նաև Կիրակի օրերը - (18, 25 Փետրուար,
4, 11, 18 Մարտ) - նախքան Ս. Պատարագը
առաւօտեան ժամը 10:45-ին:

Դաշնակցութիւնը ապրում է, շնչող ու զարգացող հաւատամք է

Մ.Խ.- Ստորեւ կը ներկայացնենք Գէմպրիճի մէջ կայացած ՀՅԴ օրուան հանդիսութեան ընթացքին բանախօս ընկ. Ժան Հալլաճեանի խօսքը:

ՀՅԴ «Մեր օրուան» տօնակատարութիւնը ա՛յն պատեհ առիթն է, որ դաշնակցական ընտանիքը արժեւորէ ներկան, ուրուագծէ դիմակալելիք մարտահրաւէրներու բնոյթն ու առաջադրէ անոնց լուծումները:

Իրագործումները՝ անպայմանօրէն մեզ կը խրախուսեն, կը գոտեպնդեն: Աւելին՝ մեզ յաւելեալ յանձնառութիւններու տակ կը դնեն, ա՛լ աւելի բծախնդրութեամբ ու հետեւողականութեամբ մատուցելու եւ դիմակալելու ապագայ գերխնդիրները: Մենք երբե՛ք նուաճումներու ու արձանագրուած յաղթանակներու դիւրիւ բոլորով գինովնալ չենք գիտեր: Այդ եղանակը՝ Դաշնակցութեան համար անյարիր վարքագիծ է՝ մեր յաջողութիւնները համարելով հայ ժողովուրդին արգասիքը, մեր նուաճումները հաշուելով մեզ շրջապատող անհամար համակիր գանգուածին ձեռքբերումները, բայց երբե՛ք սոսկ Դաշնակցութեան մենաշնորհումները: Իսկ մեր տատանումներն ու բացթողումները նուազեցնելու համար, պիտի տանք խոստումը՝ գանոնք ուղղորդելու դաշնակցական կենդանի գործով:

Այս ժամանակահատուածին մենք ակնատես եղանք Դաշնակցութեան բազմաշերտ գործունէութեան, այսպէս.

Գաւառի պատերազմը բառայայտելով հանդերձ որոշ ռազմական բացթողումներ, եկաւ եւ ամրագրեց ազգ-բանակ առաջադրանքը, եւ կարեւորեց սեփական ուժերով ապահովելու ազգային անվտանգութիւնը, հաշուի առնելով մեր փոքրամթաճ ազգ ըլլալու հանգամանքը եւ երկրի աշխարհաքաղաքական տարածքն ու գայն պաշտպանելու կարելիութիւնները:

Դաշնակցութիւնը այս թեմայով հարուստ իր պատմական փորձովը, սկսած իր հիմնադրութեան օրէն, ազգ-բանակ գոլգորդման լաւագոյն օրինակներով հարստացուցած է ռազմա-քաղաքական մեր դաշտը: Այսօր ե՛ւս Դաշնակցութիւնը իր Արցախեան ազատագրական պայքարի փորձառու մարտիկներովը՝ չուշացաւ անսալու ահագանգային ժամերու կոչին, եւ հարիւրներով, պապիկով, հայրով ու գաւակով, եկաւ լրացնելու ազգային բանակի շարքերը:

Այսօր, ա՛լ աւելի հրամայական դարձած է համակարգումի անհրաժեշտութիւնը՝ կառավարման մարմիններու, բանակի հրամանատարութեան եւ քաղաքացիական ու հասարակական միաւորներու միջեւ, մանաւանդ երբ օրհասական պահը կը հասնի հայրենիքի պաշտպանութեան:

Հայրենիքի պաշտպանութեան գործը միայն բանակային միաւորներուն վերապահուած չէ: Այդ մէկը պարտականութիւնն է եւ պարտաւորութիւնը ազգային բոլոր շերտաւորումներուն, ի Հայաստան աշխարհի եւ ի սփիւռս:

Եւ ահա, կը լսենք ու կը տեսնենք, որ դաշնակցական պահեստազօրքի նոր կազմաւորուած գումարտակը, պատերազմի կոչին միշտ պատրաստ ըլլալու ունակութիւնը ցուցաբերեց՝ իր մարտունակ զինուորով, արհեստավարժ բանակի կառոյցներու ընդմէջէն ներկայութիւն ըլլալով: Այսօր, ակնատեսն ենք առաջին վարժողական հաւաքին, համալրուած՝ ուսանողական ամպիոններէ եկած հայրերիներով, նախկին վեթերան մարտիկներով ու սփիւռքեան հայրերիներու ներկայացուցչական մասնակցութեամբ:

Ազգային բանակին ծառայելը պատիւ է նախքան պարտաւորութիւն ըլլալը:

Միւրեւիտե՛ր, պէտք է ընդունինք, որ ազգային անվտանգութեան օրակարգը մեր առաջնահերթ հիմնահարց է: Անոր կենսական գործօններէն մէկը՝ հայ մարդու թուական ներկայութիւնն է ու աճը հայրենիքի տարածքին վրայ: Այս մէկը կը հանդիսանայ այն զգայուն նրբերանգը, որ կրնայ խախտել Հայաստանի բարգաւաճումը եւ անոր լինելիութիւնը: Թուրքը, ի հեճուկս իրեն, չկրցաւ այդ չարամիտ սաթախէլական ծրագիրը իրագործել՝ տեսնելու Հայաստան աշխարհը առանց հայու: Միայն 1992-էն մինչեւ 2010 հայրենիքը լքողներու թիւը շուրջ մէկ միլիոն մարդ կը հաշուէ: Նաեւ նոյնքան վտանգաւոր է ներքին գաղթը, երբ գեղջուկը հարկադրաբար կը լքէ իր դաշտը եւ ապաստան կը գտնէ մեծ քաղաքներու մէջ:

Ո՛չ մէկ ձեռով ընդունելի է այն տեսակէտը որ կ'ըսէ, թէ արտագաղթը համաշխարհային խնդիր է եւ չէ սահմանափակուած մեր երկրով: Մեր առարկութիւնը չափի մասին է, մշտական կայք հաստատելու դիտաւորութեամբ տեղաշարժի մասին է:

Այսօրուան արտագաղթի պատկերը հասած է Ռէքրիկոնի սահմանները: Ազգային ահազանգային խնդրի պէտք է վերածուի արտագաղթի դէմ պայքարելու, համապատասխան օրէնսդրական օրէնքներ մշակելով եւ կենցաղային դրական մթնոլորտ ստեղծելով Հայաստանի ու Արցախի մէջ:

Հանրապետութեան նախագահի մատնանշումով իսկ բարացուցական է աղէտի մակարդակը, ու իր առաջադրանքով շատ յստակ կը պատգամէ, որ թուական պատկերը քանի մը տարուան ընթացքին ընդունելի համարանքի մը հասցնելը դառնայ առաջնահերթ կիզակէտը բոլոր պետամարմիններուն:

Նաեւ ունինք այլ շատ կարեւոր հարց՝ կապուած մեր արեւելումին՝ orientation-ի:

Մենք կը հաւատանք, որ Հայաստանի զարգացումը կարելի չէ պատանդ դարձնել այս կամ այն աշխարհակալ պետութեան եւ համախմբումներու շահերուն: Հայաստան մեկնած իր սեփական ազգային շահերէն, առանց գիշումներու, պիտի կարենայ նաւարկել միջազգային ոլորտներուն մէջ ինքնիշխան ու անկաշկանդ, օգտուելով մեր պատմական փորձերէն:

Մեր «Հայկական օրհանդացիան» պէտք է ըլլայ մեր միակ կողմնացոյցը:

Միակ պայմանը այս ռազմավարութեան որդեգրման այն է, որ մենք պէտք է ըլլանք ինքնավստահ մեր սեփական ուժերէն, որպէսզի համարձակ կարենանք թակել՝ ինքնուրոյն երանդով, Արեւելքի եւ Արեւմուտքի-Եւրոպայի դարպասները: Ոչ մէկ հակասութիւն կը տեսնենք նաւարկելու երկու բեւեռներու ընձեռած կարելիութիւններով՝ ըլլայ այդ Եւրասիական տնտեսական համագործակցութեան անդամակցութեամբ եւ կամ Եւրոպայի միութեան կարելիութիւններով: Գոյացած նոր դրոյթը, պիտի ստեղծէ նոր առիթ զարգանալու ու բարգաւաճելու:

Միւրեւիտե՛ր, աւանդական մեր հայ ընդգրկմախօսներու վերանորոգ բացայայտումները, կը կարծուի, որ մուր կրնայ քսել Մայիս 28-ի խոյանքին ու պատգամին: 100-ամեակի անկախութեան տարեդարձը միակուսակցական դրոշմէ գերծ պէտք է պահել: Պէտք է ընդունինք, որ անուրանալի է դաշնակցական գործիչներու դերն ու Դաշնակցութեան ներդրումը անկախութեան կերտումին, բայց այդ մէկը ամենեւին չի նշանակեր, որ այդ ազգային սխրանքը սոսկ միակուսակցական իրագործում է: Այն ազգային հպարտութիւն է ու ժառանգ, որուն համար մեծ բանաստեղծը պատգամած է՝ «Սերունդներ՛, դուք ձեզ ճանաչէ՛ք Սարգսրապատից»:

Դարերու երազի եւ պայքարի արգասիքն է Մայիս 28-ն: Բոլոր հատուածներու, համայնքներու, հարուստի, գեղջուկի, մտաւորականի, գինուորականի, ուսուցիչի, աշակերտի արիւնով նուիրականացուած տօն է:

Տիգրան մեծի արձանը չի կրնար փոխարինել Արամ Մանուկեանին:

Այլեւս ժամն է, որ անվերադարձ պատուենք Մայիս 28-ի բարդոյթի պատանքը, որ համակած է որոշ հայկական շրջանակներ, եւ միացեալ տեսլականով հիւսենք լուսաւոր ապագայի պատկերը՝ միացեալ, ազատ, անկախ եւ ինքնիշխան Հայաստանի: Մայիսեան 100-ամեակը անպայմանօրէն պիտի տօնուի համահայկական տարագով, պետութեամբ, կրօնական յարանուանութիւններով, կուսակցութիւններով, հասարակական կազմակերպութիւններով, բոլորով, բոլորով:

Հայկական պետականութեան արդի օրերու կազմաւորման խնդրով, Դաշնակցութիւնը 25 տարիներ շարունակ ջատագովը հանդիսացաւ խորհրդարանական համակարգով առաջնորդուելու անհրաժեշտութեան: Այսօր, Հայաստանի սահմանադրութեամբ նոր քաղաքական հենքը, այն խոստմանալից կառավարման արդիւնաւէտ կարգն է, ուր առկայ է ու վերահսկուած, իրաւունքի գերակայութիւնը, օրէնքով ճշգրտած մարդու իրաւունքներու անխախտելիութիւնը, իշխանութեան յստակ բաժանմամբ, ընդհանուր հաւասար ու ազատ ընտրական իրաւունքի առկայութեամբ ու տեղական կառավարման լայն լիազօրութիւններով: Այս բոլորը հիմնական կուսակցներ են Հայաստանի ու հայ ժողովուրդի կենսագործման ու զարգացման:

Այս մէկը արմատական բարեկարգումներու պատեհութիւնը պիտի ստեղծէ: Կը մնայ վրան գումարել քաղաքական կամքը, իր լրումին հասցնելու գալիք օրերու նորաձեւ համակարգը, որ քաղաքական նոր մշակոյթի, գործընթացի եւ մտածողութեան կայծը պիտի հանդիսանայ:

Դաշնակցութիւնը աւելի քան 27 Տարիներ առաջ իր Platform-ով ուրուագծած էր շատ յստակ, իշխանութեան ժողովրդականացման անհրաժեշտութիւնը



եւ ազգային միասնականութեամբ յաղթահարելու պետութեան առջեւ պատուար կանգնած դժուարութիւնները:

Դաշնակցութիւնը, այսօր ալ՝ նոյն հնչեղութեամբ կը հաստատէ այդ մէկը, յիշեցնելով որ իշխանութեան մաս կազմելը մարտավարական քայլ մըն է, եւ ոչ թէ նպատակ: Գոյանալիք նոր համակարգի կարելիութիւններով՝ Դաշնակցութիւնը իր լուծման պիտի ներդնէ պետականութեան շինութեան գանձանակին, աշաւուրը հետեւելով ազգի ընկերական, քաղաքական, տնտեսական կեանքին, ու ի հարկին առաջին խարազանողը պիտի ըլլայ յոռի երեւոյթները, նոյնիսկ եթէ այդ մէկը իր նախարարութիւններու աշխատանքի ծիրին մէջ ըլլան:

Պիտի շարունակենք պայքարիլ փոտախտի, կաշառակերութեան կասեցման, մենաշնորհներու վերացման եւ ծայր սատիճան բծախնդիր մարդկային իրաւանց կիրառման:

Յարգելի՛ ներկաներ, Դաշնակցութեան գործը աւելի ցայտուն կը տեսնենք, երբ օրհասական կացութիւն կը ստեղծուի: Դաշնակցական արժէքներու կենսագործումը այդ մթնոլորտներուն մէջ աւելի զգալի ներկայութեան կը վերածուին: Վերջին տարիներու Սուրիոյ ապահովական կացութեան վատթարացման ենթարկուած հայ գաղութը՝ տեղատուութիւն ապրեցաւ: Մեծ թիւով սուրիահայեր լքեցին ծննդավայր բնօրրանը եւ ուղղուեցան աւելի ապահով վայրեր ու երկիրներ: Դաշնակցութիւնը իր շարքերով ու համակիր գանգուածով, կազմակերպեց գաղութային կեանքը, փորձելով խուճապային մթնոլորտներէ հեռու պահել գաղութի զաւակները: Գաղութը միահամուռ ուժերով մասնակցեցաւ ու կազմակերպեց շտապ օգնութեան գործն ու հայկական թաղամասերու ինքնապաշտպանութիւնը, այդ ճամբուն վրայ գոհելով իր ընտրանի տղաքը:

Այլ տեղ, դաշնակցական մարմիններ իրենց նիւթաբարոյական մասնակցութիւնը չզլացան, նախ՝ ապահովելու մայր գաղութ Սուրիոյ պէտքերը, ապա կազմակերպուած եղանակով ընդունելու օտար ափեր հասած հայ գանգուածները: Այդ գործերը բնական է առանց բացթողումներու չանցան, բայց բոլոր մակարդակներու վրայ, գաղութային ուժերու լարումով աշխատաքը իրագործուեցաւ, տանելի դարձնելու նոր միջավայրերու պարտադրած դժուարին պայմանները՝ գաղթական հայրերիներուն վրայ:

Միւրեւիտե՛ր, Դաշնակցութիւնը Rating-ային չափերով կարելի չէ արժեւորել, կամ հետազօտական կեդրոններու քաղաքական կուսակցութիւններու հանդէպ ունեցած գնահատականներով: Դաշնակցութիւնը ապրում է, շնչող ու զարգացող հաւատամք է, գաղափարական շարժում է, իր կոչումով եւ առաքելութեամբ հայ ժողովուրդի էութեան մէկ մասնիկն է, անձնդիր ծառայութեամբ եւ միայն կենդանի գործի բարոյական բաւարարուածութեամբ յագեցնալն է դաշնակցականի վարձահատոյցը:

Հոս նաեւ կ'ուզեմ անդրադառնալ իր չափով թերեւս աննշան մէկ երեւոյթի, բայց իր թելադրականութեամբ՝ շատ բան յուշող պատգամի.

«Արդ, անոնք որոնք այցելեցին Պուրճ Համուտ, վստահ որ հանդիպեցան Սարգիս Տուտազեանին՝ Ափօլոյին, համբացած յիշատակի կոթողին՝ արձանին: Ափօլոն այն համեստ ընկերն էր, որ տարիներ շարունակ «Ազգակ» օրաթերթ ցրուած էր Պէյրութի մէջ»:

Կը մէջբերեմ այս օրինակը ընդգծելու համար, որ Ափօլոյի օրինակը համբացած չէ: Ան խօսուն եւ շնչող մէկ օրինակն է համեստ դաշնակցական մարդուն, ունչպեղին, գեղջուկին, մտաւորականին, շինականին, անհամար անյայտ դաշնակցական մարտիկներուն, որոնք իրենց կարգին նոյնքան դեր ու վաստակ ունեցած են այս ընտանիքի երթին մէջ, որ-

ՀՄԸՄ «Կամք»ի պատասխանատու կազմերու հաւաքոյթ

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդին առիթով ՀՄԸՄ «Կամք» մասնաճիւղի վարչութիւնը այս տարի եւս ի մի բերաւ մասնաճիւղիս Սկստակական եւ Մարդական Նորհուրդին անդամները, խմբակետական կազմը, մարզիչները եւ բոլոր յանձնախումբերու անդամները, կազմակերպելով հաւաքոյթ մը՝ առ ի գնահատանք իրենց տարած նուիրական աշխատանքին:

Հաւաքը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 18 Յունուար 2018-ին, երեկոյան ժամը 7:30-ին, Հայ կեդրոնի «Արթո եւ Ալիս Մարգարեան» ճաշարահէն ներս:

Մասնաճիւղիս ատենապետ եղբ. Մանուէլ Քէօսէեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ խրախուսեց գիրքնք աւելի ոգեւորուած աշխատանքի լծուելու ընթացող տարուան ընթացքին, նկատի ունենալով որ 2018 թուականը իւրապատու իրազարձուցիչներու տարի է, եւ մասնաճիւղս լաւագոյն ձեւով իր մասնակցութիւնը պիտի բերէ կազմակերպուելիք բոլոր նախաձեռնութիւններուն:

Ընթրիքի աւարտին անդամները մասնակցեցան խմբային թէ՛ անհատական մրցում-խաղերու, զորս պատրաստած էր քոյր Շողիկ Ազարիկեան:

Համագրայինի

«Փոքրերու պատմութեան ժամ»

«Գիրքը՝ մեր ընկերը, պատմութիւնը՝ մեր երեւակայութիւնը» նշանաբանով, իւրաքանչիւր ամսուան երրորդ Ուրբաթ օրը, երեկոյան ժամը 6-էն 7-ը, «Մուշեղ Իշխան» գրադարանէն ներս տեղի կ'ունենան Համագրայինի «Սանահին» մասնաճիւղի «Փոքրերու պատմութեան ժամ»ի հաւաքները:

Յունուար 19-ին Թամար Փաթաքֆալուի ներկայացուց «Չախչախ թագաւորը»: Փոքրիկները հետաքրքրութեամբ ունկնդրեցին պատմութիւնը, որ կը յայտնաբերէ, թէ ինչպէ՛ս կարելի է հարստանալ բարեխօսութեամբ եւ երազելով: Պատմութեան աւարտին բոլորը գոյնգոյն թագեր պատրաստեցին կատուի ականջներով: Ապա՝ կատուները շոգեկառք կազմելով տողանցեցին գրադարանէն ներս՝ ուսումնասիրելով գրադարանի պահարաններուն մէջ գտնուող գիրքերը:

Ձեզի անհամբեր կը սպասենք մեր յաջորդ հանդիպումներուն՝ միասնաբար վայելելու պատմութիւնը եւ անակնկալներով լեցուն յայտագիրը: Ձեր երեխաներն ու թոռները կրնան ընկերակցել մեզի. հեռաձայնեցէ՛ք Մեդրիին՝ 514 826 1075, կամ գրեցէ՛ք հետեւեալ ե-հասցէին megho7@hotmail.com:

Մեդրի Պապարեան

«Փոքրերու պատմութեան ժամ»ի պատասխանատու



ÆTERNA
Complexe funéraire • Crématorium
Funeral Complex • Crematorium


ComplexeAeterna.com
1 877 299-1889

POUR UNE CÉRÉMONIE CONTEMPORAINE

FOR A CONTEMPORARY CEREMONY

New alternative in funeral services in Montreal

Nouvelle alternative dans le domaine funéraire à Montréal



Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website
www.arsarmenienschool.ca



ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Ալին Դեքերեճեան

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսարում	Refinance
Mandat	Պատուէր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuration	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Գայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:



CIBC

Aline Shnorhokian
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com



Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7

ALBERT ARKILIANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!
*certaines conditions s'appliquent



NISSAN | **VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS** | **HONDA**

GABRIEL | **Kevork Asadourian** | **GABRIEL**

Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4
Tél. : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com



École De Conduite
AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II



Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French



BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com



SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



RE/MAX

ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000




NETTOYEUR MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Ռերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - Ե.



4. Առաջին Նահանջը եւ Սրտաբեկումը

Թրքական բանակի առաջին օրերու շփոթութիւնն անցած էր: Ինքզինքը գտնելով՝ կրցած էր Քէօփրի Թէօյի (Բասէն) առջեւ եւ Նըրըճ Գէտիկի (Ալաշկերտ) բարձունքներու վրայ կասեցնել ռուսական յառաջխաղացումը: Բայց Թրքական բանակն այդքանով չբաւականացաւ: Էնվէր փաշան, գինովցած իր կովկասեան եւ համաթրքական ծրագիրներով, Պօլսէն մեկնեցաւ Էրզրումի ճակատը: Հոն ամփոփեց իր զօրաբանակի ընտրանին, եւ խիստ յանդուգն յարձակողականի մը սկսաւ Արտահան-Օլթիի վրայով դէպի Կարս եւ Սարիխամիշ: Էնվէր փաշան ընտրած էր շատ շիտակ ճանապարհ մը հարուածելու ռուսական ամուր ճակատի եւ Կարսի բերդի կողքէն, իրեն օժանդակ ունենալով միապաղաղ քիւրդ եւ թուրք ազգաբնակչութիւն մը:

Թուրք բանակի արկածախնդիր ընդհանուր հրամանատարը կայծակի արագութեամբ կը հասնէր Սարիխամիշի անտառը՝ ընդհանուր ահաբեկում առաջացնելով ռուսական ամբողջ ճակատի վրայ: Իրարու ետեւէ նահանջը կը սկսէր: Ռուսական բանակը կը թողուր Բասէնի իր ամբողջ դիրքերը եւ նահանջի ճանապարհը կը բռնէր: Նոյն վիճակին կ'ենթարկուէին Ալաշկերտի այն մասերն, որոնք սահմանամերձ էին Կարսի ճակատին: Սարիխամիշը կը դատարկուէր Կարսը վտանգի տակ էր: Ռուսական զօրաբանակներու ղեկավարներու մեծ մասը չէր կրնար պարզել իրական կացութիւնը: Բայց Կարսի եւ Սարիխամիշի թեւերու հրամանատարութիւնը մօտեցող վտանգը կը գիտակցէր: Էնվէր փաշայի բանակն այնպէս խիզախ ընթացք մ'առած էր եւ իր առաջին քայլերուն մէջ յաջողած, որ ռուսական բանակի կովկասեան ընդհանուր հրամանատարութիւնը ստիպուած էր ետ քաշուիլ եւ միայն պաշտպանողական կերպ մղել, կանոնաւոր նահանջը ապահովելու համար: Բոլոր նշաններէն կ'երեւնար որ Կարսը կ'ամ պիտի տրուէր, կ'ամ պաշարուէր: Կովկասեան բեմը Բասէնէն կը փոխադրուէր գինուորական բնական կարգով, Ախալքալաք-Լօսի-Գանձակ-Ղարաբաղ, այսինքն Փոքր Կովկասեան լեռնաշղթայի վրայ: Ահա այսքան ահուկի վտանգի մը առջեւ կը գտնէինք ինքզինքնիստ այն ժամանակ, երբ Բասէնի եւ Ալաշկերտի մէջ, փոքրիկ Հայաստան մը կ'ուզէինք կազմակերպել:

Բասէնցիներ եւ Ալաշկերտցիներ երկու ամուսայ նոր ազատուածներ էին թրքական տիրապետութենէն, երբ ստիպուեցան թողնել իրենց դարաւոր օջախները եւ գաղթական դառնալ: Նոյն բազմաթիւ կ'արժանանային պարսկահայերն ալ, որովհետեւ այդ հեռուոր ճակատն ալ կը նահանջէր: Բասէնի շրջանէն ռուսական զօրքը կը հեռանար խուճապով, կարելի է ըսել իր ոտքերուն տակ տրորելով հայ գաղթականութիւնը: Մենք ստիպուած էինք բռնել Արաքսի ձորը, դէպի Կաղզուան, որովհետեւ Սարիխամիշ-Կարս ճանապարհը կտրուած էր:

Այդ վտանգաւոր օրերուն, Բասէնի եւ Ալաշկերտի մարմինները փրկարար առաջնորդներ հանդիսացան գլուխը կորսնցուցած ժողովրդիկն եւ իրենց ցուցմունքներով ու ղեկավարութեամբ կրցան բազմաթիւ վտանգներէ փրկել անգիտակ բազմութիւնը: Ամենէն վճռական վայրկեաններուն, երբ ստոյգ կտորածի մը վտանգին ենթակայ էր թէ տաճկական եւ թէ ռուսական Բասէնի ժողովուրդը, (որ ինչպէս էր թրքական բանակի կրակին տակ, միւս կողմէ եւ Արաքսի ձորի Ջարաբ խանէի քրդութիւնը, կը վտանգէր անոր փախուստի ճանապարհը), Բասէնի մարմնի պնդումով, հայկական երրորդ կամաւորական գունդը մնաց ժողովրդի պաշտպանութեան համար Բասէնի Բաշ գիւղի մէջ, երեք օր աւելի, եւ չենթարկուեցաւ անմիջապէս ետ նահանջելու գինուորական հրամանին:

Ալաշկերտի շրջանի մէջ Դրոյի կամաւորական գունդը իր հոգածութեան առարկայ կը դարձնէր այդ տեղի ժողովուրդը: Այդ ինքնապաշտպանողական միջոցներու շնորհիւ էր որ 50,000-ի հասնող հայ գաղթականութիւն մը կրցաւ փրկուիլ: Շատերը, քաղաքական վէճի ընթացքին, հին օրերը կը մոռնան եւ վեր յիշուած «փոքրիկ» փաստը աւելի անկարեւոր կը նկատեն, քան իրենց խօսքի ասպետութիւնը:

Հայ ժողովրդի եւ անոր ղեկավարներու շարանը Կաղզուան հասած էր, երբ դէպքերը իրենց գահավէժ ընթացքը փոխեցին: Էնվէր փաշան իր յաղթութեան վայրկեանին իսկ՝ պարտուեցաւ: Անիկա պարտուե-



ցաւ Սարիխամիշի անտառին ու խոր ձորերուն մէջ խրուելով: Բնութիւնը պարտութեան մատնեց անոր, իսկ ռուսական բանակը գիտցաւ օգտուել ընտելեան ընծայած օժանդակութենէն: Թուրք բանակի տասնեակ հազարով թաղուեցաւ ու ոչնչացաւ Սարիխամիշի անտառին մէջ: Էնվէր փաշան հազիւ իր գլուխը կրցաւ ազատել եւ անմիջապէս Պօլիս փախաւ:

Սարիխամիշի պարտութիւնը մէջքը կտորեց թրքական բանակին եւ մնաց անմոռանալի սուգ մը թուրքերուն համար: Ռուսական բանակը երբ տեսաւ գլխաւոր ուժի ջախջախումը, հրամայեց իր միւս թեւերու համայարձակումը որ շատ յաջող զարգացաւ եւ 15 օրուայ ընթացքին վերականգնեց իր նախկին դիրքերը:

Ռուսական բանակը թէեւ իր նախկին դիրքերը կը վերագրուէր, սակայն ազատուած բուռ մը հայութիւնը մեծ մասով տեղական եղած էր ձմեռուայ ամենավատ ժամանակին: Նահանջ բառը սարսափի ու գլխաւորոյս փախուստի իր իմաստով, մնաց անջնջելի հայ ժողովրդի մտքէն, ու այդ օրերէն սկսած, գաղթական բառը դարձաւ տաճկահայութեան, թշուառ ու օգնութեան կարօտ մարդուն հոմանիշ: Սակայն հասարակական մեծ աղէտի մը կերպարանք չստացաւ գործը: Ալաշկերտցիներու շատ փոքր մաս մը միայն անցաւ Իգտիրի շրջանը եւ գրկաբաց ընդունուեցաւ ռուսահայ գիւղացիութեան կողմէ. մնացածները կրկին տեղաւորուեցան Ալաշկերտի գիւղերը եւ շուտով վերագտան իրենց կանոնաւոր կեանքը: Տաճկական Բասէնի ժողովուրդը եկաւ եւ մեծ մասով տեղաւորուեցաւ ռուսական Բասէնի հայ գիւղերուն մէջ: Անոնք որ աւելի հեռուները նահանջած էին, անմիջապէս վերագրածան ռուսական Բասէն, այն յոյսով որ բանակը պիտի յառաջանար, ու իրենք իրենց պապեանական տունը պիտի դառնային՝ վերականգնելու համար: Պարսկահայ գաղթականներէն ոմանք բռնեցին երկաթուղին եւ փոխադրուեցան Կովկասի զանազան կողմերը:

